ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ Ն. ԱՂԲԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ
Հ. 19 ԴՊՐՈՑ

ք. Երևան, Տերյան փող. 54
Հեռ. 58-73-50, 56-16-08

7/19-50

24.08.2012 թ.

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ-Ի

իրավաբան պարոն Գ. Հայրապետյանին

(ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ)

Երևանի Ն. Աղբալյանի անվան հա. 19 դպրոցին հասցեագրած Ձեր 17.08.2012թ. N 176–ի 6 գրությանը հայտնվում է.

«Կրթության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ուսումնական հաստատություններում սովորողների ընդունելության պահանջները սահմանում է հիմնադիրը՝ հաշվի առնելով ուսումնական հաստատության առանձնահատկությունները:

Իսկ նույն օրենքի 3-րդ մասի համաձայն ընդհանուր կրթությունը սկսվում է վեց տարեկանից:

Օրենքի այդ դրույթների հիման վրա խնդրո առարկա հարցը կարգավորվել է ՀՀ Գիտության և Կրթության նախարարի 24.11.2010թ.-ի N 1640-ն հրամանով / որը լրամշակվել է 22.07.2011թ.-ի N 861-ն հրամանով/ հաստատված «Ուսումնական հաստատության սովորողների ընդունելության, տեղափոխման և ազատման մասին» կարգով:

Ըստ դրա.

1. Դպրոցի առաջին դասարան ընդունվելու համար երեխայի վեց տարեկանը պետք է լրացած լինի տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ:
2. Ծնողը դպրոց է ներկայացնում դիմում:
3. Պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին տեղեկանք:
4. Երկու լուսանկար 3X4սմ չափսի:
5. Ծննդյան վկայականի բնօրինակը և պատճենը: Այդ հարցով տնօրենի « իսկականի հետ ճիշտ է» մակագրությամբ պատճենը պահվում է սովորողի անձնական գործում:

Հարգանքով

Տնօրեն Հ. Ղարիբյան